

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՄԱՐԶԻ ԶՕԸ-ԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

27.01.2015

Հունվարի 26-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ անցկացվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանը, Գավառի, Մարտունու, Վարդենիսի „Ջրօգտագործող ընկերությունների,, գործադիր տնօրենները, մարզպետարանի աշխատակազմի բնապահպանության և գյուղատնտեսության վարչության աշխատակիցներ: Խորհրդակցության ընթացքում քննարկվեց Գավառի, Մարտունու և Վարդենիսի ԶՕԸ-երում առկա խնդիրներին առնչվող մի շարք հարցեր: Քննարկումների արդյունքում մարզի ղեկավարը հանձնարարեց ԶՕԸ տնօրեններին սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն՝ կապված ԶՕԸ-երի աշխատողների աշխատավարձերի պարտքերի և դրանց մարման ընթացքի մասին և աշխատանքների տանել ոռոգման ջրի վարձավճարների 2014 թվականի պարտքերի հավաքագրման ցուցանիշները 100 % հասցնելու ուղղությամբ: 2015 թվականի ոռոգման սեզոնը նորմալ կազմակերպելու համար Ռաֆիկ Գրիգորյանը հանձնարարեց նաև ԶՕԸ-երում իրականացնել գույքագրում և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան: Հանձնարարականների կատարման վերահսկողությունը վերապահվեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին: